ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*06 մայիսի 2017թվականի N 413*

## *ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի N153-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Անհատ ձեռներեց Մանուշակ Վարդերեսյանին տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն մինչև 2017 թվականի հունիսի 30-ը (երկրորդ եռամսյակի համար) /գրանցման հասցե՝քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, շենք 88, բնակարան 34, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 54/1 /առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, 35 քառակուսի մետր մակերես//:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*06 մայիսի 2017թվականի N 414*

## *ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի N153-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Անհատ ձեռներեց Գագիկ Իսրայելյանին տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն մինչև2017 թվականի հունիսի 30-ը (առաջին կիսամյակի համար) /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս, 264, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս 264 /առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես//:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*06 մայիսի 2017թվականի N 415*

## *ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի N153-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Անհատ ձեռներեց Կարինե Գրիգորյանին տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն մինչև 2017 թվականի հունիսի 30-ը (երկրորդ եռամսյակի համար) /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, շենք 12, բնակարան 46, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 14/1 /առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 47 քառակուսի մետր մակերես//:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* [signature] *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*06 մայիսի 2017թվականի N 416*

*ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ հաստատված հավելվածը՝*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1. Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի «Հրազդան համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 175-Ն որոշմամբ հաստատված բյուջեի հավելվածում «Սոցիալական հատուկ արտոնություններ այլ դասերին չպատկանող» /4729/ հոդվածով նախատեսված ծախսերից 1230000 /մեկ միլիոն երկու հարյուր երեսուն հազար/ դրամ հատկացնել Հրազդան քաղաքի հայրենական պատերազմի մասնակից թվով 6 վետերանների, Ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակից թվով 32 զինծառայողի և զոհված թվով 3 զինծառայողի ընտանիքներին դրամական օգնություն տրամադրելու նպատակով:*

*2. Հանձնարարել ֆինանսական բաժնին կատարելու նշված վճարումը:*

*3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*06 մայիսի 2017թվականի N 417*

## *ԱՐՄԵՆ ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24 կետի, 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված կարգի, հիմք ընդունելով Արմեն Ծատուրյանի 2017 թվականի ապրիլի 28-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 30 շենքի թիվ 32 բնակարանի բնակիչ Արմեն Ծատուրյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N09122016-07-0014, ծածկագիր՝ ATNDHRRBCIE9/ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 42 շենքի թիվ 19 հասցեում գտնվող բնակարանի գործառական նշանակությունը փոփոխել հասարակականի՝ գրասենյակի:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*10 մայիսի 2017թվականի N 418*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24 կետին Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատվածկարգի 26 կետի 2-րդ ենթակետի.*

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Հրազդան համայնքին պատկանող Կենտրոն թաղամասի Զորավար Անդրանիկի պողոտա 1/5 հասցեում գտնվող 700.0քմ ընդհանուր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից փոփոխել հասարակական կառուցապատման:*

*2.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*

*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*10 մայիսի 2017թվականի N 419*

*ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ Ռ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔԻ ԾԱՎԱԼԻՑ ԴՈՒՐՍ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն և 2006 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 1855-Ն որոշումների հաստատված կարգերի, հիմք ընդունելով «ԱՐՏԷԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված գլխավոր հատակագիծը.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Ռ. Միքայելյան փողոցի թիվ 2 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքին կից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 25 և 27 կետերով նախատեսված ինքնակամ իրականացված կառույցները ճանաչել օրինական:*

*2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Ռ. Միքայելյան փողոցի թիվ 2 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի ծավալից դուրս բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից ինքնակամ իրականացված կառույցների հողամասերն անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցվում են շենքերի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:*

*3. Շենքին կից ինքնակամ իրականացված կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված է քաղաքաշինական նորմերով ու կանոններով, և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:*

*4.Շենքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 1129.0քմ, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2 և 3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և համաձայն տարածագնահատման համաձայնեցված սխեմայի՝ գտնվում է 2-րդ գոտում:*

*5.Հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:*

*6.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:*

*7.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*

*8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*10 մայիսի 2017թվականի N 420*

## *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՀԱՐԹԱԿԻ, ԽԱՆՈՒԹԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑԱԾ ԱՐՏԱՔԻՆ ԴՌԱՆ ԵՎ ՊԱՏՈՒՀԱՆԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ, ՄԻՋՆՈՐՄՆԵՐԻ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ բաժնի պահանջների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված կարգի, հիմք ընդունելով «ԱՐՏԷԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված շինությունների հատակագիծը, Աշոտ Օհանյանի 2017 թվականի ապրիլի 28-ի դիմումը.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*1.Օրինական ճանաչել Հրազդան քաղաքի Մ. Սպարապետ փողոցի թիվ 7 տան բնակիչ Աշոտ Օհանյանի կողմից Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Ռ. Միքայելյան փողոցի թիվ 2/2 հասցեում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական N2182293, տրված՝ 2006 թվականի հոկտեմբերի 26-ին/ հասարակական կառուցապատման հողամասում գտնվող խանութի ինքնակամ կառուցած 2.47 քմ արտաքին մակերեսով հարթակը, խանութի ինքնակամ բացած արտաքին դուռն ու պատուհանը, և կատարել միջնորմների ձևափոխություն:*

*2.Սույն որոշման ընդունման օրվանից հարթակի օրինականացման համար սահմանված 2000 /երկու հազար / դրամ, դռան և պատուհանի օրինականացման համար սահմանված 3400 / երեք հազար չորս հարյուր/ դրամ գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:*

*3.Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Ռ. Միքայելյան փողոց թիվ 2/2 հասցեում գտնվող խանութի ինքնակամ կառուցած հարթակի զբաղեցրած 2.47քմ ընդհանուր մակերեսով հողամասը անհատույց՝ բաժնային սեփականության իրավունքով փոխանցել Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Ռ. Միքայելյան փողոց թիվ 2 շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:*

*4.Հրազդան քաղաքի Մ. Սպարապետ փողոցի թիվ 7 տան բնակիչ Աշոտ Օհանյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման*

վկայական N2182293, տրված՝ 2006 թվականի հոկտեմբերի 26-ին/ Հրազդան քաղաքի Ռ. Միքայելյան փողոց թիվ 2/2 հասցեում գտնվող հասարակական կառուցապատման խանութի 87.83քմ մակերեսով հատվածի գործառական նշանակությունը փոփոխել հասարակականից բնակելիի՝ բնակելի տան:
5.Շինության պահպանումը վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված է քաղաքաշինական նորմերով ու կանոններով, և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
6.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*10 մայիսի 2017թվականի N 421*

*ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24 կետի, հիմք ընդունելով Օֆիկ Հովհաննիսյանի 2017 թվականի ապրիլի 27-ի դիմումը.*

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Հրազդան քաղաքի Կճառ թաղամասի թիվ 28 տան բնակիչ Օֆիկ Հովհաննիսյանին թույլատրել Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Շահումյան փողոցի 2-րդ նրբանցք թիվ 2 հասցեում գտնվող իրեն սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N21042015-07-0047, գաղտնաբառ՝ FBRSNS3IYGAV/ հողամասում գտնվող ցանկապատի մի հատվածը վերակառուցել:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*10 մայիսի 2017թվականի N 422*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 500.0քմ մակերեսով 0515-0001 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Պուրակային փողոց 15/6:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*10 մայիսի 2017թվականի N 423*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.*

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Հրազդան համայնքին պատկանող Կենտրոն թաղամասում գտնվող 700.0քմ մակերեսով 0452-0103 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, Զորավար Անդրանիկի պողոտա 1/5:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*10 մայիսի 2017թվականի N 424*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.*

*<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ</u>՝*

*1.Հրազդան համայնքին պատկանող Կենտրոն թաղամասում գտնվող 20.0քմ մակերեսով 0452-0019 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 32/25:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* ***ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ***

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*10 մայիսի 2017թվականի N 425*

*ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ*
*ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Գուրգեն Մարտիրոսյանի մայիսի 3 -ի դիմումը.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի թիվ 361 տան բնակիչ Գուրգեն Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 2575897, տրված՝ 2008 թվականի սեպտեմբերի 11-ին/ Հրազդան քաղաքի Միկրոշրջան Դ-1 թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 4-րդ փողոց 24:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*10 մայիսի 2017թվականի N 426*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՈՒ ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքային համայնքի ղեկավարի 2009 թվականի հունվարի 26-ի թիվ 3-Ա որոշումը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2016 թվականի օգոստոսի 15-ի թիվ 14 մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցն ու հողամասը կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2017 թվականի մայիսի 2-ի N417 գրավոր առաջարկությունը և Արամ Աբրահամյանի կողմից տրված 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 183 գրավոր համաձայնագիրը.*

*<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝</u>*

*1.Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Միկրոշրջան թաղամասի Պուրակային փողոց 15/2 հասցեում գտնվող՝ 42.58քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:*

*2.Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի Պուրակային փողոց 15/2 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 42.58քմ մակերեսով ավտոտնակը/անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայական N15112016-07-0041, գաղտնաբառ՝ QJGXUFRICXGI/ գինը սահմանել 73000 /յոթանասուներեք հազար/ դրամ և նույն հասցեում տարածագնահատման 2-րդ գոտում գտնվող ավտոտնակի համար առանձնացված 42.58քմ մակերեսով հողամասը 82000 /ութսուներկու հազար/ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած անձ՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 236 շենքի թիվ 5 բնակարանի բնակիչ Արամ Աբրահամյանին (այսուհետ գնորդ):*

*3.Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում որոշման 2-րդ կետով ավտոտնակի համար սահմանված գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը թիվ 900125001140 գանձապետական հաշիվներին:*

*4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*

*5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*10 մայիսի 2017թվականի N 427*

## *ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի N153-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Անհատ ձեռներեց Արարատ Ծատուրյանին տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն մինչև 2017 թվականի հունիսի 30-ը (առաջին և երկրորդ եռամսյակների համար) /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, շենք 42, բնակարան 10, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, 98-րդ շենքին հարող տարածք /առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես//:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*10 մայիսի 2017թվականի N 428*

## *ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի N153-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Անհատ ձեռներեց Նունե Բարեղամանին տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն մինչև 2017 թվականի հունիսի 30-ը (առաջին և երկրորդ եռամսյակների համար) /գրանցման հասցե՝ գյուղ Լեռնանիստ, 11 փողոց, տուն 34, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Շահումյան 2, նրբանցք 16, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, 26-50 քառակուսի մետր մակերես//:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


# *ՈՐՈՇՈՒՄ*

*10 մայիսի 2017թվականի N 429*

## *ԶՈՀՎԱԾ (ՄԱՀԱՑԱԾ) ԿԱՄ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԴԱՐՁԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ (ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ) ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի թիվ 947-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջների.*

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*Հաստատել Հրազդան քաղաքի տարածքում բնակվող զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) կարիքավոր ընտանիքների բնակարանային պայմանները բարելավելու, հաշվառման վերցնելու ցուցակը՝ համաձայն հավելվածի:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

Հավելված՝
Հրազդան համայնքի ղեկավարի
2017 թվականի մայիսի 10-ի
N 429 որոշման

# Ց Ո Ւ Ց Ա Կ

Բնակարան չունեցող /անօթևան, ժամանակավոր բնակվող, վարձով բնակվող և զոհված զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիքների

| հ/հ | Զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողի /ազատամարտիկի/ ազգանուն,անուն,հայրանունը | Համայնքի անվանումը | Երբ և որտեղ է զոհվել, վիրավորվել ՊՆ տեղեկանքի համարը | Ընտանիքի անդամների թիվը | Ստացել է արդյոք նախկինում բնակարան |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ռաֆայելյան Արտակ Էդիկի | Ք.Հրազդան Վանատուր թաղ. Տուն 446 | Զոհվել է մարտական հերթապահության ժամանակ 28.03.2017թ. ՊՆ-36/413 | 6-հայրը, մայրը, եղբայրը, հորեղբայրը, հորեղբոր կինը, հորեղբոր աղջիկը | ոչ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ